

ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Տիգրան ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության ակադեմիայի
ՕՀԳ ամբիոնի ավագ դասախոս

Ավագակությունն իր իրավաբանական հատկանիշներով բավականին բարդ հանցագործություն է, որը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով: Միևնույն ժամանակ այն որոշակի ընդհանրություններ ունի սեփականության դեմ ուղղված որոշ այլ հանցագործությունների, ինչպես նաև ծովահենության ու բանդիտիզմի հետ:

Այս առումով տեսական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առավել հաճախ հանդիպող և բարդություններ առաջացնող հարցերից է ավագակության սահմանազատումը բռնությամբ զուգորդված կողոպուտից և շորթումից: Որոշակի խնդիրներ կան նաև՝ կապված ավագակությունը ծովահենությունից և կազմակերպված զինված խմբի կողմից կատարված ավագակությունը բանդիտիզմից սահմանազատելու հետ: Ընդ որում, նշված հարցերի կապակցությամբ քրեագետների շրջանում առկա են որոշ տարակարծություններ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում սահմանելու հստակ չափանիշներ, որոնցով ավագակությունը կարելի է սահմանազատել նշված հարակից հանցագործություններից, ինչը ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն կունենա:

Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 176-ի 2-րդ մասի 4-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում կողոպուտի (ուրիշի գույքի բացահայտ հափշտակության) համար, որը զուգորդված է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, անհրաժեշտություն է առաջանում սահմանազատելու տվյալ արարքը

ավագակությունից:

Այս հանցագործությունների հիմնական տարբերությունը օբյեկտիվ կողմի մեջ է: Մասնավորապես, դրանք նախ և առաջ սահմանազատվում են ըստ գործադրվող բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի բնույթի: Այսպես, կողոպուտի նշված դեպքում խոսքը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի մասին է: Իսկ ավագակությունը, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 175-ի համաձայն, զուգորդվում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Այս առումով, անհրաժեշտ է նախ և առաջ պարզաբանել բռնության կամ դրա սպառնալիքի՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր և ոչ վտանգավոր տեսակների էությունը:

Բռնության և դրա սպառնալիքի հասկացությունները և դրանց դասակարգումը նշված երկու տեսակների առաջին անգամ սահմանվել են ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի պլենումի 1966 թ. մարտի 22-ի «Գողության, կողոպուտի և ավագակության վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» թիվ 3 որոշման մեջ, ինչն իր հետագա դրսևորումն է գտել նաև միութենական այլ հանրապետությունների իրավակիրառ պրակտիկայում¹: Ըստ այդմ, բռնությունը պետք է համարել կյանքի համար վտանգավոր, երբ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հանցավորը՝

1. տուժողին գրկում է կյանքից,
2. տուժողի նկատմամբ կատարում է այնպիսի գործողություններ, որոնք վտանգում են նրա կյանքը (օրինակ՝ մարդուն խեղդելը, գլուխը երկար ժամանակով կամ հաճախակի ջրի մեջ մտցնելը, շնչառությունը տարբեր ձևերով փակելը, էլեկտրական հոսանքով մարմնին դիպչելը, աստի-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎՎՐՈՒԹՅՈՒՆ

ճանաբար թույն ներարկելը և այլն) և շարունակվում են այնքան ժամանակ, քանի դեռ չի կատարվում հանցավորի պահանջը՝ հանձնել գույքը կամ ասել դրա տեղը:

Նույն որոշման համաձայն՝ առողջության համար վտանգավոր բռնություն է համարվում տուժողին ծանր, միջին ծանրության կամ թեթև մարմնական վնասվածքներ հասցնելը (ՀՀ գործող քր. օր.-ի իմաստով նրա առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը):

Հարկ ենք համարում նշել նաև, որ արարքը որպես ավագակություն որակելու համար պարտադիր չէ տուժողին փաստացի վնաս պատճառելը. բավական է միայն, որ բռնությունը գործադրելու պահին այն վտանգավոր լինի կյանքի կամ առողջության համար: Օրինակ՝ գույքը հափշտակելու նպատակով տուժողի գլխին ծանր առարկայով հարվածելը, ընթացքի ժամանակ զնացքից կամ ավտոմեքենայից դուրս գցելը, դանակով կենսական կարևոր նշանակություն ունեցող օրգանների հատվածում հարվածելը և այլն, անկախ նրանից՝ այդ գործողությունները իրական վնաս պատճառե՞լ են, թե՞ ոչ, համարվում են կյանքի կամ առողջության համար վտանգավոր²:

Ինչ վերաբերում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքին, ապա, քննարկվող որոշմանը համապատասխան, այն նույնպես կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Ավելի հաճախ հանդիպում է խոսքով, զենք կամ որպես զենք օգտագործվող առարկա ցուցադրելով իրականացվող սպառնալիքը: Հնարավոր է սպառնալիքը նաև ժեստերով, օրինակ՝ մատը կոկորդին քսելով (սպանելու սպառնալիք) և այլն:

Նույն որոշման համաձայն՝ բռնությունը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր կհամարվի այն դեպքերում, երբ դրա գործադրմամբ տուժողի կյանքը

վտանգի չի ենթարկվի, կամ նրա առողջությանը չի հասցվի ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս (ծանր, միջին ծանրության կամ թեթև մարմնական վնասվածքներ): Փաստորեն, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությունը կարող է դրսևորվել ծեծի, ձեռքերը կամ ոտքերը կապկպելու կամ ոլորելու, անձին որևէ տեղում փակելու և նման այլ ձևերով: Ինչ վերաբերում է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքին, ապա այն պետք է դրսևորվի վերը նշված բռնություններից որևէ մեկի գործադրմամբ:

Այսպիսով, ինչպես քննարկվող հարցերի կապակցությամբ արդարացիորեն նշում է նաև Վ.Վ. Երակսիմը, կողոպուտի և ավագակության գլխավոր տարբերությունը պայմանավորված է գործադրվող բռնության կամ դրա սպառնալիքի ինտենսիվության աստիճանով և ծավալով³:

Սակայն, թեև սահմանազատման տվյալ չափանիշն օրենսդրորեն հստակ սահմանված է, այնուամենայնիվ իրավակիրառական պրակտիկայում հանդիպում են սխալ որակման դեպքեր՝ կապված բռնության (ֆիզիկական կամ հոգեկան) բնույթը զնահատելու հետ: Այսպես, օրինակ՝ Դ-ի և Շ-ի գործով քննչական մարմինն արարքը որակել է որպես խմբի կողմից նախնական համաձայնությամբ կատարված ավագակություն՝ մեղադրական եզրակացության մեջ նրանց մեղավորության վերաբերյալ հետևությունը պատճառաբանելով, որ մեղադրյալները կապել են տուժող Տ-ի աչքերը, ձեռքերն ու ոտքերը՝ դրանով իսկ գործադրելով նրա կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության սպառնալիք: Սակայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն արդարացիորեն վերաորակել է Դ-ի և Շ-ի գործողությունները կողոպուտի՝ հիմնավորելով, որ գործում առկա չեն ապացույցներ, որոնք վկայում են նշված անձանց գործողությունների՝ տուժողի կյանքի կամ առողջության համար առկա և իրական վտանգ

ստեղծելու մասին: Տուժողին պարզապես կապկպելը դեռ չի կարող հիմք հանդիսանալ հարձակումը նրա կյանքի կամ առողջության համար վտանգավոր գնահատելու համար: Գործով առկա չեն փաստական հանգամանքներ, որոնք վկայում են տուժող Տ-ի կյանքին կամ առողջությանը այլ կերպ սպառնալու մասին, ուստի արարքը չի կարող որակվել որպես ավազակություն:

Ընդհանրապես, ավազակության և կողոպուտի սահմանազատման առումով իրավակիրառ պրակտիկայում առավել հաճախ բարդություններ են առաջանում հենց այն դեպքերում, երբ արարքը կատարվում է բռնություն գործադրելու սպառնալիքով: Բանն այն է, որ խոսքով արտահայտված սպառնալիքը հաճախ անորոշ բնույթ է կրում, օրինակ, երբ դրսևորվում է «վատ կլինի», «կփոշմանես», «չփորձես դիմադրել» և նման այլ արտահայտություններով: Բայց նույնիսկ այն դեպքերում, երբ սպառնալիքն արտահայտվում է շատ կոնկրետ (օրինակ՝ «կսպանեն», «կմորթեն», «գլուխդ կջարդեն» և այլն), չի կարելի միանշանակ պնդել, որ տուժողն այն ընկալում է որպես իր կյանքի կամ առողջության համար իրական սպառնալիք: Այդ իսկ պատճառով նման դեպքերում արարքը ճիշտ որակելու համար անհրաժեշտ է բացահայտել, որ տուժողը գործադրված սպառնալիքն ընկալել է որպես իր կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական վտանգ, իսկ հանցավորն էլ գիտակցել է այդ հանգամանքը: Ընդ որում, նման դեպքերում, մեր կարծիքով, արարքը պետք է որակվի որպես ավազակություն անգամ այն պարագայում, երբ տուժողը չի ընկալել գործադրված սպառնալիքը որպես իր կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական վտանգ, սակայն հանցավորը հանդգնած է եղել հակառակում: Այսինքն, նման բոլոր դեպքերում արարքը որակելու գլխավոր նախապայմաններից մեկը հանցավորի դիտավորության ուղղվածությունն է, այլ ոչ թե տուժողի ընկալումը:

Ավազակության և կողոպուտի հանցակազմերը տարբերվում են նաև օբյեկտիվ կողմի օրենսդրական նկարագրման եղանակով: Մասնավորապես, ավազակությունը, ինչպես հայտնի է, նախատեսված է հատված, իսկ կողոպուտը՝ նյութական հանցակազմով: Համապատասխանաբար, եթե ավազակությունն ավարտված է համարվում ուրիշի գույքին տիրանալու նպատակով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հարձակում գործելու պահից, ապա կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությամբ զուգորդված կողոպուտը՝ ուրիշի գույքին տիրանալուց հետո գույքը հանցավորի հայեցողությամբ տնօրինելու կամ օգտագործելու հնարավորություն ունենալու պահից:

Ամփոփելով ավազակության և կողոպուտի օբյեկտիվ կողմը բնութագրող առանձնահատկությունների քննարկումը՝ նշենք, որ այս հանցագործությունների դեպքում կարող են տարբերվել նաև ուրիշի գույքին տիրանալու եղանակները: Այսպես, եթե կողոպուտի դեպքում այն միշտ բացահայտ է, ապա ավազակության դեպքում ուրիշի գույքին կարող են տիրանալ ոչ միայն բացահայտ, այլև գաղտնի:

Ավազակության և կողոպուտի դեպքերում գործադրվող բռնության կամ դրա սպառնալիքի բնույթն ու ինտենսիվությունը բնութագրող հատկանիշները հնարավորություն են տալիս սահմանազատելու քննարկվող հանցագործությունները ոչ միայն ըստ օբյեկտիվ կողմի, այլև օբյեկտի: Մասնավորապես, դրանց օբյեկտների հարաբերակցությունը բնութագրելով, պետք է նշել, որ ավազակության և կողոպուտի հիմնական անմիջական օբյեկտները՝ սեփականության կոնկրետ ձևի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, ամբողջովին համընկնում են: Միևնույն ժամանակ, քննարկվող հանցագործությունների պարտադիր ֆակուլտատիվ օբյեկտները տարբերվում են: Այս-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

պես, ավազակության դեպքում այդպիսի օբյեկտ են մարդու կյանքի և առողջության, իսկ բռնությամբ զուգորդված կողոպուտի դեպքում նրա ֆիզիկական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները⁴:

Սուբյեկտիվ կողմի հատկանիշներով ավազակության և բռնությամբ զուգորդված կողոպուտի հանցակազմերը հիմնականում համընկնում են. երկու հանցագործությունն էլ բնութագրվում են ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով, ինչն արտահայտվում է հանցավորի կողմից ուրիշի գույքը վերցնելու և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելու և դրանից նյութական շահ ստանալու ցանկության մեջ: Ընդ որում, ինչպես այս կապակցությամբ արդարացիորեն նշում է Գ.Լ. Կրիգերը, տուժողի նկատմամբ գործադրվող բռնությանը հանցավորի հոգեբանական վերաբերմունքը նշված դեպքերում ունի որոշակի առանձնահատկություն: Մասնավորապես, եթե ուրիշի գույքին տիրանալը հանցավորի գլխավոր, հիմնական նպատակն է, ապա բռնությանը նա վերաբերվում է պարզապես որպես այդ նպատակին հասնելու միջոցի: Սակայն, եթե կողոպուտի դեպքում հանցավորը գիտակցում է, որ կիրառվող ֆիզիկական կամ հոգեկան բռնությունը վտանգավոր չէ տուժողի կյանքի կամ առողջության համար, ապա ավազակություն կատարողի գիտակցության մեջ ընդգրկված է հակառակը՝ որ գործադրվող բռնությունը (սպառնալիքը) վտանգավոր է տուժողի կյանքի կամ առողջության համար⁵:

Տեսության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առկա որոշ խնդիրներ կապված են նաև ավազակության ու շորթման հանցակազմերի սահմանազատման հետ:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 182-ի համաձայն՝ շորթում է համարվում անձի կամ նրա մերձավորի մասին արատավո-

րող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի կամ նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջը: Բնականաբար, քննարկվող հարցի կապակցությամբ առանձին հետաքրքրություն է ներկայացնում շորթման այնպիսի եղանակը, ինչպիսին անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքն է: Ինչ վերաբերում է բռնության գործադրմանը, որի պարզաբանումը նույնպես կարևոր նշանակություն ունի ավազակության և շորթման հանցակազմերի սահմանազատման համար, ապա այն որպես շորթման ժանրացուցիչ հանգամանք նախատեսված է ՀՀ քր. օր.-ի հոդված 182-ի 2-րդ մասի 1-ին կետում:

Այսպիսով, շորթումը պետք է տարբերել ավազակությունից հետևյալ հատկանիշներով.

Նախ, ավազակության դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը գործադրվում է որպես գույքը վերցնելու կամ այն պահելու միջոց, մինչդեռ շորթման ժամանակ բռնությունը կամ դրա սպառնալիքը տուժողի կամքի վրա ներգործելու, այն ճնշելու միջոց է:

Երկրորդ, ավազակության ժամանակ գույքին տիրանալը տեղի է ունենում բռնության կամ դրա սպառնալիքի հետ միաժամանակ կամ դրա գործադրումից անմիջապես հետո, իսկ շորթման դեպքում հանցավորը ցանականում է գույքը ստանալ հետագայում: Այդ իսկ պատճառով շորթման դեպքում սպառնալիքը կարող է տրվել, այդ թվում՝ ամենատարբեր, այնպիսի ձևերով, որոնք հնարավոր չեն ավազակության պա-

րագայում: Արարքը շորթման հանցակազմով որակելու հիմք հանդիսացող նման սպառնալիքները կարող են տրվել, օրինակ՝ նամակով, գրությամբ, կապի միջոցներով, երրորդ անձի միջոցով և նման այլ եղանակներով:

Ավելին, շորթման ժամանակ, ի տարբերություն ավազակության, սպառնալիքը կարող է լինել անգամ քողարկված, սակայն բոլոր դեպքերում տուժողին պետք է հասկանալի լինի դրա փաստական իմաստը, և տուժողը պետք է ընկալի դա իրականացնելու անխուսափելիությունը:

Բացի դրանից, ավազակության ժամանակ հանցավորը գույքը վերցնում է դրա օրինական տիրապետողի կամքին հակառակ, իսկ շորթողին տուժողն ինքն է գույք հանձնում, չնայած դա անում է հարկադրված՝ սպառնալիքի կամ բռնության ազդեցության տակ:

Ավելացնենք նաև, որ եթե շորթողի պահանջը չի կատարվում և հանցավորը, մերժում ստանալով, անմիջապես բռնություն է գործադրում ու վերցնում գույքը, ապա շորթումը, կախված գործադրած բռնության կամ դրա սպառնալիքի բնույթից, վերածվում է ավազակության կամ ծանրացուցիչ հանգամանքներով կողոպուտի: Նման դեպքերում արարքը, պայմանավորված գործի հանգամանքներով, որակվում է կամ միայն ծանրացուցիչ հանգամանքներով կողոպուտ, կամ ավազակություն:

Իսկ եթե շորթողի պահանջը չի կատարվում, և որոշ ժամանակ անց նա բռնությամբ կամ դրա սպառնալիքով վերցնում է ուրիշի գույքը, հանցավորի գործողությունները որակվում են հանակցությամբ՝ շորթում և ավազակություն կամ կողոպուտ⁸:

Ինչ վերաբերում է ավազակության սահմանազատմանը հարակից այլ հանցագործություններից, ապա հարկ ենք համարում նշել հետևյալը.

Որոշակի բարդություններ կարող են առաջանալ ավազակության և ծովահենության հանցակազմերի սահմանազատման ժամանակ, քանի որ այս հանցագործու-

թյունների օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը գրեթե հանրկնուն են: Ծովահենությունը, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 220-ի համաձայն, սահմանվում է որպես ուրիշի գույքին տիրանալու նպատակով ծովային կամ գետային նավի վրա հարձակում, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:

Փաստորեն, ծովահենությունից ավազակությունը տարբերվում է հանցագործության օբյեկտով և հանցանքը կատարելու տեղով: Մասնավորապես, ծովահենությունը, ի տարբերություն ավազակության, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն է, որը կարող է կատարվել միայն ծովային կամ գետային նավի վրա հարձակվելով: Դրանով պայմանավորված որոշակի առանձնահատկություններով է բնութագրվում նաև ծովահենության առարկան: Այդպիսին կարող են հանդիսանալ միայն ծովային կամ գետային նավի ուղևորների կամ անձնակազմի անդամների գույքը, տեղափոխվող գույքը, ինչպես նաև նավն ամբողջությամբ կամ դրա առանձին մասերը: Բանն այն է, որ որևէ այլ պարագայում ծովահենությունը հնարավոր չէ⁹:

Մասնագիտական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ վեճերի տեղիք է տալիս նաև կազմակերպված զինված խմբի կողմից կատարված ավազակությունը բանդիտիզմից սահմանազատելու հարցը:

Բանդիտիզմի համար քրեական պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 222-ով: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում անձանց կամ կազմակերպությունների վրա հարձակվելու նպատակով կազմակերպված զինված խումբ (բանդա) ստեղծելու, այդպիսի խումբը ղեկավարելու կամ դրա կողմից կատարվող հարձակումներին մասնակցելու, իսկ երկրորդ մասը՝ բանդայում մասնակցության համար:

Օրենսդրական վերոհիշյալ բնորոշու-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

մից հետևում է, որ բանդիտիզմը բարդ հանցակազմ է: Բանդայի հարձակումներից մասնակցելու ձևով դրսևորվելու դեպքում այն իր մեջ ընդգրկում է բռնության կամ դրա սպառնալիքի հետ զուգորդված տարբեր հանցագործություններ, որոնք տվյալ պարագայում դրա բաղկացուցիչ մասն են կազմում: Այլ կերպ ասած՝ բանդայի հարձակումներին մասնակցելու ձևով բանդիտիզմի և մյուս հանցագործությունների հարաբերակցությունը, ըստ մեզ, ամբողջի և մասի հարաբերակցությունն է: Իսկ քրեական իրավունքի տեսության մեջ միանշանակ ընդունված է այն տեսակետը, որ ամբողջի և մասի մրցակցության դեպքում նախապատվությունը պետք է տալ ամբողջին և արարքը որակել միայն ամբողջի համար քրեական պատասխանատվությունն նախատեսող հոդվածով:

Բացառություն են կազմում միայն այն դեպքերը, երբ մասը իրենից ավելի ծանր հանցանք է ներկայացնում (տվյալ դեպքում, օրինակ՝ երբ հարձակումը զուգորդվում է սպանությամբ): Այդ դեպքում արարքը, իրոք, պետք է որակել հանցագործությունների համակցությամբ: Սակայն այս առումով նույնպես պետք է որոշակի վերապահում անել: Բանն այն է, որ սպանության ծանրացուցիչ հանգամանքների շարքում նախատեսված է սպանությունը՝ շահադիտական դրդումներով, պատվերով, ինչպես նաև՝ զուգորդված շորթմամբ, ավազակությամբ կամ բանդիտիզմով (ՀՀ քր. օր.-ի հոդված 104-ի 2-րդ մասի 8-րդ կետ): Այսինքն, տվյալ դեպքում համապատասխան հանցագործությունների համակցությունը օրենսդրորեն արդեն հաշվի է առնված, և արարքը լրացուցիչ՝ որպես շորթում, ավազակություն կամ բանդիտիզմ որակելու կարիք չկա:

Միևնույն ժամանակ պետք է նշել նաև, որ իրկիրառական առումով, մեր կարծիքով, առավել նպատակահարմար կլիներ

քրեական օրենքում հրաժարվել ծանրացուցիչ այն հանգամանքներից, որոնք կապված են այլ հանցագործություններով զուգորդված լինելու հետ: Այդ պարագայում, իհարկե, արարքները պետք է որակվեն համապատասխան հանցագործությունների համակցությամբ:

Այսպիսով, բանդիտական հարձակման ժամանակ կատարված ավազակությունը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ: Այսինքն, կազմակերպված խմբի կողմից զենքի գործադրմամբ կատարված ավազակությունը բանդայի հարձակումներին մասնակցելու ձևով բանդիտիզմի բաղկացուցիչ մաս է և պետք է որակվի միայն որպես բանդիտիզմ՝:

Այս առումով, ըստ մեզ, ճիշտ չեն այն քրեագետները, ովքեր գտնում են, որ տվյալ դեպքում առկա չէ ամբողջի և մասի հարաբերակցություն, ուստի բանդայի կողմից կատարված ավազակային հարձակումը չպետք է կլանվի բանդիտիզմի հանցակազմի մեջ: Հիմնավորելով իրենց մոտեցումը՝ նրանք նշում են, որ բանդիտիզմի հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է այնպիսի արարքներով, որոնք հաճախ իրենց մեջ այլ հանցագործության հատկանիշներ չեն պարունակում: Չէ՞ որ բանդիտիզմի ավարտված հանցակազմն առկա է նաև այն դեպքում, նշում են նրանք, երբ բանդան ստեղծված է, կամ երբ անձը անդամակցել է բանդային կամ էլ մասնակցել է բանդայի կողմից կատարված հարձակմանը՝:

Սակայն նրանց հետ կարելի է համաձայնել միայն այն առումով, որ արարքը բանդիտիզմ որակելու համար չի պահանջվում այլ հանցանքի (տվյալ դեպքում՝ ավազակության) կատարում բանդան ստեղծելու, այն ղեկավարելու կամ բանդային այլ կերպ մասնակցելու դեպքերում, երբ բավական է միայն համապատասխան նպատակը: Հետևաբար, նրանցից յուրաքանչյուրի արարքը, մեր կարծիքով, պետք է որակվի համապատասխան հանցագործությունների համակցությամբ: Մասնավոր-

րապես, բանդային մասնակցության դեպքում որպես բանդիտիզմ և կազմակերպված զինված խմբի կողմից կատարված ավազակության օժանդակություն, իսկ բանդան ստեղծելու և ղեկավարելու դեպքերում որպես բանդիտիզմ և կազմակերպված զինված խմբի կողմից կատարված ավազակություն: Բանն այն է, որ ՀՀ քր. օր. - ի հոդված 41-ի 5-րդ մասի համաձայն՝ «Կազմակերպված խումբ, հանցավոր հանագործակցություն ստեղծած կամ դրանք ղեկավարած անձը ենթակա է պատասխանատվության սույն օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերում կազմակերպված խումբ կամ հանցավոր հանագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու համար, ինչպես

նաև դրանց կողմից կատարված բոլոր հանցանքների համար, եթե դրանք ընդգրկվել են նրա դիտավորությամբ»:

Սակայն, ըստ մեզ, իրավիճակն այլ է, երբ բանդիտիզմը դրսևորվում է միայն ավազակային հարձակմանը (հարձակումներին) մասնակցելու ձևով, որի դեպքում արարքը պետք է որակվի միայն որպես բանդիտիզմ:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ ավազակությունը և հարակից հանցագործությունները որակելու ու սահմանազատելու՝ մեր առաջարկած չափանիշները կարող են օգտակար լինել ինչպես իրավակիրառական ընդհանուր պրակտիկայի ձևավորման, այնպես էլ հետագա տեսական հետազոտությունների համար:

- ¹ Տե՛ս Сборник действующих постановлений Пленумов Верховных Судов СССР, РСФСР и РФ по уголовным делам с комментариями и пояснениями. М., 1999, էջ 288:
- ² Տե՛ս նաև ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, էջ 380, ինչպես նաև՝ Волженкин Б.В. Вопросы квалификации краж, грабежей, разбоев, совершенных с целью завладения личным имуществом граждан. Л., 1981, էջեր 14-15:
- ³ Տե՛ս Ераксин В.В. Ответственность за грабеж. М., 1972, էջ 83:
- ⁴ Տե՛ս Чернышева Л.В. Грабеж и его соотношение со смежными преступлениями // Вестник Калининградского юридического

института МВД России, N 1(17) - 2009, էջեր 167-168:

- ⁵ Տե՛ս Кригер Г.П. Ответственность за разбой. М., 1968, էջ 28:
- ⁶ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, էջ 405:
- ⁷ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, էջ 506:
- ⁸ Տե՛ս Вьюнов В.М. Разбой: уголовно-правовая характеристика. Автореф. дис. на соиск. учен. степ. канд. юрид. наук. Томск, 2003, էջ 26:
- ⁹ Տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, էջեր 513-514:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ****DIFFERENTIATION OF THE ROBBERY
FROM ADJACENT CRIMES****Tigran NERSISYAN**

*Senior Lecturer of the Department of OIA
of the Academy of Police of the
Republic of Armenia*

In this article is mentioned, that the robbery, with its juridical indications, has many common characteristics with other crimes against property (in particular, with pillage, committed with violence and extortion), banditism and piratism as well. Consequently, in author's opinion, it is necessary to develop the clear criterions of differentiation of the robbery from adjacent crimes. This will have not only theoretical, but also practical importance.

The main difference of the robbery from pillage, committed with violence, as autor mentioned, is in the character of violence or threat. So, in the pillage, committed with violence, in difference to the robbery, violence or threat are not dangerous for life or health.

The differentiation of the robbery from extortion, in author's opinion, is possible by

the following indications:

1) in the robbery violence and threat are remedies of taking possession or holding of property, and in the extortion – of the influence on the will of the victim;

2) in the robbery violence or threat are committed in the same time that taking possession of property or at once after it, and in the extortion – for taking possession of property in the future;

3) in the robbery the criminal taking possession of property contrary to the will of the victim, and in the extortion the victim passes the property his (her) self.

The main difference of the robbery from piratism is in the object and place of the crime. So, the piratism, in difference of the robbery, is the crime against public security, which can be committed only from the sea or river ship.

About the differentiation of the robbery and banditism autor mentioned, that robbery-attacks, committed by the band, should be qualified just as a banditism.